

ԲԱԺԻՆ 3.

**ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ, ԶԱՂԱԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ՀԱՍՏՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ*****Օրենսդրության համապատասխանեցման սկզբունքներ***

Սույն գլխով ներկայացվում են Ազգային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի մշակման աշխատանքների կազմակերպման, փորձաքննության, ներկայացման ու համակարգման սկզբունքները:

Ազգային ծրագրի շրջանակներում նորմատիվ իրավական ակտեր ընդունելու իրավասությունը սահմանվում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածով¹: Ազգային ծրագրի շրջանակներում ընդունվող նորմատիվ իրավական ակտերի տեսակները նախատեսվում են Ազգային ծրագրով՝ համաձայն Օրենքի 2-րդ գլխի:

Սույն գլխով սահմանված սկզբունքների հիման վրա ընդունվելիք նորմատիվ իրավական ակտերը պետք է տարածվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրական և գերատեսչական նորմատիվ կամ անհատական իրավական ակտերի վրա, որոնք կընդունվեն Ազգային ծրագրի շրջանակներում:

Իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը

Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը (այսուհետ՝ իրավաստեղծ աշխատանքներ) իրականացվելու է համաձայն Ազգային ծրագրի ժամանակացույցի: Ազգային ծրագրում նշված են նորմատիվ իրավական ակտերի նախնական անվանումներն ու տեսակները, դրանց մշակման համար պատասխանատու մարմինները և այդ ակտերի ներկայացման ժամկետները, ինչպես նաև այլ լրացուցիչ տեղեկություններ:

Հաշվի առնելով, որ Ազգային ծրագրով նախատեսված է նաև Իրավական թարգմանչական կենտրոնի ստեղծումը, մինչև իրավաստեղծ աշխատանքները սկսելը Թարգմանչական կենտրոնը պետք է իրականացնի Եվրամիության իրավական ակտերի պաշտոնական հայերեն թարգմանությունը՝ հիմք ընդունելով Ազգային ծրագրով սահմանված ժամանակացույցը: Թարգմանչական կենտրոնի տարեկան աշխատանքային ծրագիրը հաստատվելու է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով՝ համաձայնեցնելով ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչության հետ՝ համաձայն Ազգային ծրագրի ժամանակացույցի: Թարգմանչական կենտրոնը թարգմանված իրավական ակտեր պետք է ներկայացնի պատասխանատու մարմին՝ ըստ Թարգմանչական կենտրոնի տարեկան աշխատանքային ծրագրի: Ընդ որում, պաշտոնական թարգմանությամբ իրավական ակտի առաջին էջի վերին աջ անկյունում պետք է նշվեն «ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը:

Իրավական ակտերի նախագծերի մշակումն ու ներկայացումը

Եվրամիության թարգմանված իրավական ակտեր ստանալուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, նորմատիվ իրավական ակտի նախագիծը մշակելու համար պատասխանատու մարմինը (այսուհետ՝ նախագիծը մշակող մարմին) պետք է առաջարկություն ներկայացնի ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովին՝ նորմատիվ իրավական ակտի մշակումն ապահովելու միջոցառումների կազմակերպման և իրագործման վերաբերյալ:

Անհրաժեշտությամբ նշանակալից օրենքի կամ նորմատիվ իրավական այլ ակտի նախագծի մշակման համար կարող է ստեղծվել ժամանակավոր միջգերատեսչական աշխատանքային խումբ: Ժամանակավոր միջգերատեսչական աշխատանքային խմբի կազմը

¹ ՀՕ-320, 03.04.2002թ.: Ազգային ծրագրի ընդունումից հետո Օրենքում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ և լրացումներ:

հաստատվում է ԵՄ ինտեգրման համակարգող հանձնաժողովի որոշմամբ: Նախագծի մշակման աշխատանքները կատարելու համար կարող են ներգրավվել նաև գիտական կազմակերպությունների, շահագրգիռ այլ մարմինների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և (կամ) մասնագետներ: Նախագիծը մշակող մարմինն այդ մարմնի մասնագետներից կարող է ստեղծել նախագծի մշակման ներգերատեսչական աշխատանքային խումբ:

Ծավալով կամ կարևորությամբ նշանակալից օրենքի նախագծի մշակման աշխատանքների սկզբում նախագիծը մշակող մարմինը կարող է պատրաստել դրա հայեցակարգը: Հայեցակարգում անհրաժեշտ է ներկայացնել կարգավորման ենթակա հարաբերությունների բնութագիրն ու ապագա իրավական ակտի նպատակները, շարադրել հիմնական դրույթները, վերլուծել նախագծվող նորմերի կիրարկման ենթադրվող հետևանքները:

Նորմատիվ իրավական ակտի նախագիծը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելիս անհրաժեշտ է դրան կցել՝

- Եվրամիության այն իրավական ակտի(երի) ցանկը, որի (որոնց) հիման վրա մշակվել է նորմատիվ իրավական ակտի նախագիծը.
- Եվրամիության իրավական ակտի չկիրառվող նորմերի կամ անցումային դրույթների առկայության դեպքում՝ դրանց հիմնավորումը,
- նախագծի ընդունման կապակցությամբ իրավական այլ ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին տեղեկանքը.
- պետական իրավական փորձաքննության եզրակացությունը.
- այն մարմինների ցանկը, որոնց հետ նախագիծը համաձայնեցվել է.
- նախագծի վերաբերյալ ստացված կարծիքների վերաբերյալ տեղեկանքը.
- օրենքով և այլ իրավական ակտերով պահանջվող այլ փաստաթղթեր:

Իրավական ակտերի նախագծերի փորձաքննությունն ու պետական գրանցումը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, ներառյալ՝ Ազգային ծրագրով սահմանված նախագծերը, Եվրամիության իրավական ակտերին համապատասխանեցնելու նպատակով պարտադիր պետք է անցնեն Եվրամիության օրենսդրական համապատասխանության փորձաքննություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչության կողմից: Այդ ակտերի մշակումից հետո Օրենքի պահանջների և օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանումն ապահովելու նպատակով նշված ակտերը պետք է պարտադիր անցնեն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական իրավական փորձաքննությունը:

Ազգային ծրագրի շրջանակներում մշակված նորմատիվ իրավական ակտերը պետք է ընդունվեն միայն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում Եվրամիության օրենսդրական համապատասխանության և իրավական փորձաքննությունները (դրական) անցնելուց հետո: Փորձաքննության բացասական արդյունքների դեպքում նորմատիվ իրավական ակտի նախագիծը լրամշակման համար պետք է վերադարձվի նախագիծը մշակող մարմին:

Ազգային ծրագրի շրջանակներում ընդունված նորմատիվ իրավական ակտերը ենթակա են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից պետական գրանցման: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը կազմելու և վարելու է Ազգային ծրագրի շրջանակներում ընդունվող նորմատիվ իրավական հատուկ ցանկ:

***Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հասարակության իրազեկումը
և կարծիքների հավաքումը***

Ազգային ծրագրի շրջանակներում մշակված նորմատիվ իրավական ակտերը նախագծերը պետք է ներկայացվեն հանրության քննարկմանը՝ նախագիծը մշակող մարմնի կողմից: Այդ մարմնի միջոցով պետք է հավաքվեն շահագրգիռ անձանց կողմից ներկայացված կարծիքները, քննարկվեն, ամփոփվեն և նախագծի հետ մեկտեղ ներկայացվեն Հայաստանի Հանրապետության կառավարության: Նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ հասարակության իրազեկման և կարծիքների հավաքման գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչությունը:

Ազգային ծրագրի շրջանակներում մշակված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հասարակության իրազեկման, կարծիքների հավաքման, շրջանառման և ամփոփման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նորմատիվ իրավական ակտի իրազեկման վերաբերյալ հասարակության իրազեկումը

Ազգային ծրագրի շրջանակներում ընդունված նորմատիվ իրավական ակտերը ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչությունը ներկայացնում է հանրությանը ՀՀ կառավարության սահմանված կարգով:

***Ազգային ծրագրի շրջանակներում ընդունվող նորմատիվ իրավական ակտերի
առանձնահատկությունները***

Ազգային ծրագրի շրջանակներում ընդունվող նորմատիվ իրավական ակտը ներառելու է անվանում և հիմնական մաս: Նորմատիվ իրավական ակտը կարող է ներառել եզրափակիչ մաս կամ անցումային դրույթներ: Նորմատիվ իրավական ակտը կարող է ներառել անցումային դրույթներ, եթե իրավական ակտը լրիվ գործողության մեջ դնելու համար պահանջվում են ժամկետներ կամ որոշակի պայմաններ, կամ եթե որոշակի ժամկետների համար անհրաժեշտ է սահմանել իրավական ակտի հիմնական նորմերից տարբերվող այլ նորմեր: Ընդ որում, նորմատիվ իրավական ակտի անցումային դրույթների վերաբերյալ պետք է ներկայացվեն դրանց մանրամասն հիմնավորումները:

Եթե Եվրամիության համապատասխան իրավական ակտում տրվում են հիմնական եզրերի բացատրությունները, ապա ՀՀ նորմատիվ իրավական ակտում նույնպես պետք է տրվեն այդ բացատրությունները: Ազգային ծրագրի շրջանակներում մշակված նորմատիվ իրավական ակտերում պետք է պահպանվեն Եվրամիության համապատասխան իրավական ակտի նորմերի կարգավորման էությունը:

1.1 ՀՀ եվրահինտեզրման կառավարման համակարգի նորմատիվ իրավական ակտերի ներդրման ժամանակացույց

0 NN ը/կ	1 Միջոցառում	2 Պատասխանատու մարմին	3 Ներկայացման ժամկետ	4 Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	5 ԵՄ տեխնիկական աջակցություն
2006					
1.	«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	ՀՀ արդարադատության նախարարություն	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
2.	«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենք	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	2-րդ եռամսյակ	25	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
3.	Հայաստանի Հանրապետության Նախագահի 2002 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության կարգը սահմանելու մասին» ՆՀ-1064 հրամանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի նախագիծ	ՀՀ կառավարության աշխատակազմ	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
4.	Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին Եվրոպական Միության հինտեզրման գործընթացի Հայաստանի Հանրապետության գլխավոր բանակցող նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիր	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
5.	Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին Հայաստանի Հանրապետության օգնության ազգային համակարգող նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիր	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

6.	Եվրոպական Միությանը ինտեգրման խորհրդի, համակարգող հանձնաժողովի և համակարգող աշխատանքային խմբի գործունեության կարգը, կանոնադրությունները և անհատական կազմերը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ կառավարության աշխատակազմ	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
7.	Ազգային ծրագրի շրջանակներում նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման, ներկայացման, այդ նախագծերի վերաբերյալ հասարակության իրազեկման, կարծիքների հավաքման, շրջանառման և ամփոփման կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ արդարադատության նախարարություն	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
8.	Ազգային ծրագրի շրջանակներում ընդունված նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ հասարակության իրազեկման կարգը սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում	ՀՀ կառավարության աշխատակազմ	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
9.	«Իրավական քարզանչական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ արդարադատության նախարարություն	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
10.	«ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ կառավարության աշխատակազմ	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
11.	ԵՄ համապատասխան կառույցների հետ ԵՄ ինտեգրման վերաբերյալ բանակցությունների ժամանակացույցի, ընթացքի և քննարկվելիք հարցերի պլանավորման աշխատանքների իրականացման և ԵՄ ինտեգրման խորհրդին ներկայացման կարգը հաստատելու մասին	ՀՀ արտաքին գործերի նախարարություն ՀՀ կառավարության աշխատակազմ	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ				
12.	Ազգային ծրագրի և գործունեության ծրագրի իրականացման ընթացքի մոնիտորինգի, իրականացման արդյունքների գնահատման համար համապատասխան չափորոշիչների համակարգի մշակման և ԵՄ ինտեգրման խորհրդին ներկայացման կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ կառավարության աշխատակազմ	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
13.	Հաշվետվությունների և վիճակագրական տվյալների հիման վրա ԵՄ ինտեգրման Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի մոնիտորինգի իրականացման կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ կառավարության աշխատակազմ	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
14.	ԵՄ ինտեգրման գործընթացին ուղղվող ֆինանսական աջակցության ծրագրավորման ու համակարգման կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2-րդ եռամսյակ	25	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
15.	ԵՄ ինտեգրման, ԵՄ ինտեգրման Ազգային ծրագրի և գործողությունների իրականացման գործընթացներին ուղղված ծրագրերի ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության ուսումնասիրության, վերլուծության և գնահատման կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն	2-րդ եռամսյակ	25	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
16.	Ազգային ծրագրի նորմատիվ իրավական ակտերի նախագծերը Եվրամիության իրավական ակտերին համապատասխանեցնելու նպատակով	ՀՀ կառավարության աշխատակազմ	2-րդ եռամսյակ	25	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	Եվրամիության օրենսդրական համապատասխանության փորձաքննության մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ				
17.	«ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոնի կողմից ԵՄ ինտեգրման, ԵՄ ինտեգրման Ազգային ծրագրի և գործողությունների ծրագրի իրականացման գործընթացների վերաբերյալ հասարակական կարծիքի հավաքման և վերլուծության իրականացման, ինչպես նաև ԵՄ ինտեգրման գործընթացին առնչվող փաստաթղթերի հրապարակման և դրանց բաշխման ու տարածման կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի հրամանի նախագիծ	ՀՀ կառավարության աշխատակազմ	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
18.	Հայաստանի Հանրապետության համապատասխան հանրապետական գործադիր և այլ պետական մարմինների կանոնադրություններում լրացումներ կատարելու մասին կառավարության որոշումների նախագծեր (ԵՄ ինտեգրման ստորաբաժանումներ ստեղծելու մասին)	ՀՀ համապատասխան հանրապետական գործադիր և այլ պետական մարմիններ	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
19.	Հայաստանի Հանրապետության վարչապետի 2002 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 802-Ն որոշումում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծ	ՀՀ կառավարության աշխատակազմ	2-րդ եռամսյակ	25	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
20.	ԵՄ ինտեգրման և ԵՄ ինտեգրման Ազգային ծրագրի իրականացման գործընթացներում ընդգրկված մասնագետների	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	2-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

	վերապատրաստման կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի որոշման նախագիծ				
21.	Եվրոպական Միության իրավական ակտերին համապատասխան ընդունված Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի հաշվառման կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանի նախագիծ	ՀՀ արդարադատության նախարարություն	2-րդ եռամսյակ	15	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ				545	

1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN ը/կ	Միջոցառում	Պատասխանատու մարմին	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	«Իրավական թարգմանչական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծում	ՀՀ արդարադատության նախարարություն	<ol style="list-style-type: none"> ԵՄ մարմիններն ու իրավական ակտերի համակարգը (ընդհանուր դասընթաց) ԵՄ իրավական ակտերի թարգմանություններ իրականացնող թարգմանիչների համար պատրաստված հատուկ թարգմանչական դասընթացներ 	Խորհրդատվություն
2.	«ԵՄ ինտեգրման տեղեկատվական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծում	ՀՀ կառավարության աշխատակազմ	<ol style="list-style-type: none"> ԵՄ մարմիններն ու իրավական ակտերի համակարգը (ընդհանուր դասընթաց) ԵՄ ինտեգրման ոլորտում հասարակայնության հետ կապերի գծով մասնագետների համար պատրաստված հատուկ դասընթացներ 	Խորհրդատվություն
3.	ՀՀ կառավարության աշխատակազմի ԵՄ ինտեգրման վարչության ստեղծում	ՀՀ կառավարության աշխատակազմ	ԵՄ մարմիններն ու իրավական ակտերի համակարգը (ընդհանուր դասընթաց)	Խորհրդատվություն
4.	ՀՀ հանրապետական գործադիր և այլ պետական մարմիններում ԵՄ ինտեգրման ստորաբաժանումների ստեղծում կամ Ազգային ծրագրով նախատեսված լիազորությունների վերապահում	ՀՀ կառավարության աշխատակազմ	ԵՄ մարմիններն ու իրավական ակտերի համակարգը (ընդհանուր դասընթաց)	Խորհրդատվություն